ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

08 նոյեմբերի 2016 թվականի N 166-Ա

Վ. ԱԲԳԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 1-ին և 167-րդ հոդվածի 3-րդ մասերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշումը, ինչպես նաև *Վ. Աբգարյանի* անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Եղվարդի Հ. Թադևոսյանի անվան N 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Վարվառա Աբգարյանին*** տրամադրել 2016 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից՝ տաս աշխատանքային օր՝ 2016 թվականի նոյեմբերի 21-ից մինչև դեկտեմբերի 2-ը ներառյալ:

2. ***Վարվառա Աբգարյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Եղվարդի Հ. Թադևոսյանի անվան N 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ՝ ***Արմանուշ Կարապետյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Եղվարդի Հ. Թադևոսյանի անվան N 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Վարվառա Աբգարյանի*** 2016 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործած մասը՝ 15 աշխատանքային օրը՝ տեղափոխել և միացնել հաջորդ տարվա *(2017 թվականի)* ամենամյա արձակուրդին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի նոյեմբերի 08
ք. Հրազդան